ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ 1
ՄԱՅԻՍ 2006

ՄԱԿ-Ի ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ներածություն 4

II. Ընդհանուր տեղեկություններ 4

III. Կարիքների գնահատում 5

IV. Արձանագրության կիրարկման 2006-2010թթ. միջոցառումների ծրագրի շրջանակները 9

V. Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր (2006-2010 թթ.) 12

VI. Կարճաժամկետ գերակայություններ 21

VII. Ռազմավարության կիրարկման հիմքերը 24

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ԵՏՀ	ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողով
ՇՄԱՌԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում
ՌԷԳ	Ռազմավարական էկոլոգիական գնահատում
ՏԲԿ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

ՄԱԿ-Ի ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

I. Ներածություն

Սույն փաստաթուղթը մշակվել է ի կատարումն ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Էսպոյի կոնվենցիա) Կողմերի երրորդ հանդիպման աշխատանքային պլանի:

ՄԱԿ ԵՏՀ Ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրության կիրարկման ազգային ռազմավարությունը մշակվել է ՄԱԿ-ի Եվրոպայի և ԱՊՀ երկրների տարածաշրջանային կենտրոնի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ՏԲԿ) աջակցությամբ:

Սույն փաստաթուղթը հանդիսանալու է որպես Հայաստանում ՌԷԳ համակարգի ներդրման քաղաքականությունն ուրվագծող հիմնական փաստաթուղթ, որն ապագայում (ՌԷԳ արձանագրության փաստացի կիրարկման գործընթացում) կարող է փոփոխվել և ընդարձակվել:

II. Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանի Հանրապետությունը Էսպոյի կոնվենցիան վավերացրել է 1996թ. մայիսի 14-ին, իսկ կոնվենցիայի շրջանակներում «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրել է 2003թ. մայիսի 21-ին:

Էսպոյի կոնվենցիայի և Արձանագրության շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների որոշակի մասը կանոնակարգվում է 1995թ. նոյեմբերին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), որի նպատակն է պետության կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման միջոցով կանխորոշել, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել ինչպես նախատեսվող գործունեության, այնպես էլ հայեցակարգերի (այդ թվում՝ հայեցակարգեր, ծրագրեր, համալիր սխեմաներ և գլխավոր հատակագծեր) հնարավոր վնասակար ազդեցությունը մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա:

Օրենքով սահմանված «հայեցակարգ» հասկացությունը ներառում է սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի,

գյուղատնտեսության, ձկնային տնտեսության, լեռնահանքային արդյունաբերության, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության, սոցիալական, բնապահպանության և հանգստավայրերի, զբոսաշրջության ու սպասարկման ոլորտի զարգացման հայեցակարգերը, ինչպես նաև տարածքային պլանավորման փաստաթղթերն ու պաշարների համալիր օգտագործման սխեմաները: Օրենքում, նաև «հայեցակարգ» հասկացությունը հստակ տարանջատված է նախատեսվող գործունեությունից:

Հայաստանում, 2004-2005թթ. Արձանագրության կիրարկման կարողությունների զարգացման ուղղությամբ, ՄԱԿ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի աջակցությամբ իրականացվել է ռազմավարական էկոլոգիական գնահատման փորձնական ծրագիր՝ նպաստելու Հայաստանում ՌԷԳ արձանագրության իրականացման համար կարողությունների ստեղծմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում, որի խնդիրն էր փորձարկել ու ցուցադրել Արձանագրության գործնական կիրառման հնարավորությունները Հայաստանում և առաջարկություններ ներկայացնել Երևան քաղաքի գլխավոր հատակագծում բնապահպանական խնդիրների օպտիմալացման և համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

III. Կարիքների գնահատում

2004-2005թ.թ. ՄԱԿ և ՏԲԿ աջակցությամբ իրականացվող ՌԷԳ փորձնական ծրագրի նախնական փուլում կատարվել է ՇՄԱՌԳ առնչվող կարիքների գնահատում, որի արդյունքում ներկայացվել են կարողությունների զարգացմանն ուղղված մի շարք առաջարկություններ: Կարիքների գնահատումը բացահայտել է այնպիսի միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝ բնապահպանական փորձաքննության ոլորտի նորմատիվ իրավական հենքի կատարելագործումը, ներառյալ՝ ձեռնարկների ու մեթոդական ուղեցույցների մշակումը, ինչպես նաև ինստիտուցիոնալ կառուցվածքի կատարելագործումը և փորձնական ծրագրերի իրականացումը տարբեր ոլորտների համար:

Կարիքների գնահատումն իրականացվել էր հիմք ընդունելով բնապահպանական պետական փորձաքննության պրակտիկայի ուսումնասիրությունը և ռազմավարական բնույթի փաստաթղթեր մշակող պետական մարմիններին ուղղված հարցումների պատասխանները: Կարիքների գնահատման արդյունքները ներկայացվել և քննարկվել են շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության ընթացքում:

Ինչպես որ ներկայացված էր կարիքների գնահատման վերլուծության մեջ, չնայած նրան, որ Օրենքում սահմանված է, որ այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հարցերը, այնուամենայնիվ, Օրենքը լիարժեք չի ապահովում Արձանագրության պահանջների կատարումը:

Օրենքի վերլուծությունը, ընդհանուր առմամբ, բացահայտել է այնպիսի թերություններ, ինչպիսիք են Օրենքի սահմանումների անհստակությունը, փորձաքննության համար նախատեսված երկար ժամկետները (70-180 օր), երկիմաստ ընթացակարգերը, շահագրգիռ կողմերի իրավունքների, պարտականությունների ու պատասխանատվության աղոտ շրջանակները, հասարակության մասնակցության անիրատեսական դրույթները և այլն: Օրենքը հստակորեն չի տարանջատում նաև ձեռնարկողի կողմից իրականացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը պետական լիազոր մարմնի կողմից իրականացվող բնապահպանական պետական փորձաքննությունից և, հետևաբար, չի ներառում առաջինին վերաբերող ոչ մի սկզբունքային պահանջ: Նույնիսկ, Օրենքով ամրագրված՝ հասարակության մասնակցության կարգի ՀՀ կառավարության որոշմամբ ընդունման մասին պահանջը մինչ օրս չի կատարվել՝ Օրենքում տվյալ ընթացակարգի սկզբունքների բացակայության պատճառով:

Օրենքը չի նախատեսում հայեցակարգերի ու նախագծային փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տարբերակված մեթոդաբանական մոտեցում և չի ներառում այնպիսի սկզբունքային դրույթներ ու ընթացակարգեր, ինչպիսիք են.

1. ՇՄԱՌԳ իրականացնելու և հաշվետվության տեսքով այն ներկայացնելու պարտադիր պահանջը,
2. ՇՄԱՌԳ հաշվետվության կազմմանը և բովանդակությանը ներկայացվող պահանջները,
3. ՇՄԱՌԳ հաշվետվության ներկայացման պարզ ու հստակ ընթացակարգերը, ներառյալ՝ ժամկետներն ու պարտականությունները,
4. ՇՄԱՌԳ հաշվետվության հասարակական լսումների իրականացման գործընթացն ու ժամկետները,
5. ՇՄԱՌԳ հետ կապված տնտեսական մեխանիզմները, ներառյալ՝ գործընթացի ֆինանսավորումը, և օրենքով կարգավորման ենթակա այլ պահանջները:

Ինչ վերաբերում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ոչ լիարժեք կիրարկմանը, ապա այն պայմանավորված է ոչ միայն Օրենքում ամրագրված թերություններով կամ բացթողումներով, այլ նաև

ենթաօրենսդրական ակտերի անկատարությամբ, ձեռնարկողների և որոշումներ ընդունողների իրազեկության ցածր մակարդակով, նախագծային փաստաթղթերում բնապահպանական բաժինների մշակման ցածր որակով, մեթոդական ակտերի բացակայությամբ, գործընթացում ներգրավվող մասնագետների որակավորմանն առնչվող խնդիրներով և նյութատեխնիկական հիմքերի անբավարարությամբ:

Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտություն առաջացավ կատարելագործել բնապահպանական պետական փորձաքննության ոլորտի օրենսդրությունը: Այդ նպատակով մշակվեց «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)՝ հիմք ընդունելով Օրենքը և դրա կիրարկման 10 տարվա փորձը: Նախագիծը մշակվել է հաշվի առնելով նաև Էսպոի կոնվենցիայի, ՄԱԿ-ի տնտեսական հանձնաժողովի «Շրջակա միջավայրի ոլորտում տեղեկության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիա) ու Արձանագրության պահանջները, Եվրոմիության խորհրդի «Պետական ու մասնավոր որոշ նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները գնահատելու մասին» 85/337/EEC և 97/11/EC և «Որոշ պլանների ու ծրագրերի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները գնահատելու մասին» 2001/42/EC դիրեկտիվների դրույթները:

Նախագծում հստակեցված են ՇՄԱՌԳ ենթակա փաստաթղթերը, տարանջատված են «ՇՄԱՌԳ» և «բնապահպանական պետական փորձաքննություն» հասկացությունները, ընդգծված է դրանց իրականացման հերթականությունը և բնապահպանական փորձաքննության փուլայնությունը, պատասխանատու կառույցները, ՇՄԱՌԳ հաշվետվության բովանդակությանը վերաբերող պահանջները, ժամկետային սահմանափակումները, գործընթացի մասնակիցների շրջանակները որոշելու հնարավորությունը, հասարակայնության մասնակցությունն ապահովող՝ հասարակայնության ծանուցման և քննարկումների կազմակերպման սկզբունքային ընթացակարգը, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները և այլ ընթացակարգային հարցեր: Նախագծում ներառված է դրույթ, որ առանց բնապահպանական պետական փորձաքննական դրական եզրակացության արգելվում է ռազմավարական փաստաթղթի ընդունումը:

Նախագիծը համաձայնեցվել է շահագրգիռ կողմերի հետ և ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: Նախագծի ընդունումից հետո մեկ տարվա ընթացքում կմշակվեն դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը, այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման մեթոդական

ուղեցույցը ու հասարակայնության ծանուցման ու քննարկումների իրականացման կարգը և կառաջարկվեն փոփոխություններ՝ գործող մի շարք օրենքներում:

Արձանագրության կիրարկումն ապահովող սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում պետք է ամրագրվեն օրենքով, որը հանդիսանում է ՀՀ Սահմանադրությունից և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքից բխող պահանջ: Վերջիններիս համաձայն՝ միայն օրենքով պետք է ամրագրվեն իրավաբանական ու ֆիզիկական անձանց իրավունքները, ազատությունները, սահմանափակումները, նրանց պարտականությունները, նրանց նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն իրականացնելու կարգերը, պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը և այլն:

Քանի որ, բնապահպանական պետական փորձաքննության ինստիտուտը կայացած է, ուստի, օրենսդրական բարեփոխումներից բացի, անհրաժեշտություն է իրականացնել նաև օժանդակ միջոցառումներ, մասնավորապես՝ ուղղված փորձաքննության գործընթացի մասնակից կողմերի կարողությունների ամրապնդմանն ու զարգացմանը:

ՇՄԱՌԳ գործընթացի մասնակից կամ շահագրգիռ կողմերի շրջանակն ընդգրկում է՝

- ՀՀ ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովները և ՀՀ կառավարությունը, որոնք պատվիրում կամ մշակում և ընդունում են ՇՄԱՌԳ ենթակա օրենսդրական ակտեր,
- նախարարություններն ու գերատեսչությունները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք, իրենց իրավասության շրջանակներում, մշակում, պատվիրում և հաստատում են ՇՄԱՌԳ ենթակա հիմնադրույթային փաստաթղթեր,
- Շրջակա միջավայրին առնչվող միջազգային համաձայնագրերի համակարգողները և բնապահպանական ծրագրերի ղեկավարները,
- ՇՄԱՌԳ-ի ենթակա փաստաթղթեր մշակող և (կամ) փաստաթղթերի ՇՄԱՌԳ իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք,
- գիտակրթական հաստատությունները, որոնք դասավանդում են շրջակա միջավայրի և դրա ազդեցության գնահատման հետ կապված առարկաներ.
- շրջակա միջավայրի պահպանության գործում շահագրգռված հասարակական կազմակերպությունները.

- լայն շահագրգիռ հասարակայնությունը.
- ՇՄԱԳ և ՇՄԱՌԳ զարգացմանն աջակցություն ցուցաբերող միջազգային կազմակերպությունները:

IV. Արձանագրության կիրարկման 2006-2010թթ. միջոցառումների ծրագրի շրջանակները

Այս բաժնում ներկայացվում է ՌԷԳ արձանագրության կիրարկման 2006-2010թթ. միջոցառումների ծրագիրը որպես միջնաժամկետ գործողությունների շարք՝ ուղղված համակարգային, ինստիտուցիոնալ և կադրային կարողությունների զարգացմանը, ինչպես նաև՝ տեղեկատվական բնույթի ընդհանուր միջոցառումներ: Վերջիններիս իրականացումը կպահանջի ինչպես պետական բյուջեից հատկացումներ, այնպես էլ՝ ֆինանսների հայթայթում միջազգային աղբյուրներից (մանրամասները տես Հավելվածում):

Սույն ռազմավարությունը մշակվել է՝ հիմք ընդունելով ինչպես կարիքների գնահատման արդյունքում ներկայացված առաջարկությունները, այնպես էլ Երևանի գլխավոր հատակագծի ՌԷԳ փորձնական ծրագրի իրականացման ընթացքում բացահայտված խնդիրները: Այն լրամշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի քննարկումների ընթացքում ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա:

Համակարգային կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ՝

1. «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունում.
2. «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում և ընդունում՝
   - 2.1. «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքով լիազոր պետական մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում,
   - 2.2. ««Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակման և ընդունման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշում,
   - 2.3. «ՇՄԱՌԳ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» նորմատիվ գերատեսչական ակտ,
   - 2.4. Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացին (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) հասարակայնության ծանուցման ու քննարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում,

2.5. ՀՀ կառավարության կողմից սահմանվող՝ անդրսահմանային ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթի բնապահպանական պետական փորձաքննության իրականացման ընթացակարգի մշակման համար օրինակելի ձևը հաստատելու մասին ՀՀ բնապահպանության նախարարի հրամանի նախագիծ.

3. ՀՀ գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համապատասխան օրենքների նախագծերի մշակում՝
   3.1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում,
   3.2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում,
   3.3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում.
4. Նոր օրենքի նախագծի մշակում և ընդունում՝
   4.1. Բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման դեպքում կասեցման, դադարեցման և արգելման կարգի մասին» ՀՀ օրենք.
5. Մինչև «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա, սակայն բնապահպանական փորձաքննական եզրակացություն չունեցող ռազմավարական փաստաթղթերի փորձաքննության իրականացում:

Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ

6. Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացը կանոնակարգող լիազոր մարմնի, ինչպես նաև ՇՄԱՌԳ իրականացնող կառույցների՝
   6.1. անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի (ներառյալ՝ համակարգչային տեխնիկա, գրականություն և այլն) զարգացում,
   6.2. հասարակայնության հետ կապերի իրականացման կարողությունների զարգացում (ներառյալ՝ շահագրգիռ կողմերի բացահայտում, լսումների կազմակերպում և այլն),
7. Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացը կանոնակարգող լիազոր մարմնի՝
   7.1. ներգերատեսչական համաձայնեցման լծակների կատարելագործում (կարգերի մշակում),
   7.2. բնապահպանական պետական փորձաքննության օրենքով սահմանված պահանջների նկատմամբ բնապահպանական պետական վերահսկողության իրականացման մեթոդական ցուցումների մշակում.
8. Բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնող կառույցի և շահագրգիռ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման

մարմինների հետ համագործակցության լծակների կատարելագործում (կարգերի մշակում):

Կադրային կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ

9. Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացի (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) մասնակից կառույցների կադրերի վերապատրաստում՝ ըստ համապատասխան ոլորտների և թեմաների.
10. ՇՄԱՌԳ փորձագետների ու մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ փորձի փոխանակման սեմինարների ու խորհրդակցությունների կազմակերպում.
11. Հայաստանի համապատասխան բուհերում ՇՄԱՌԳ թեմաների ուսուցում, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Կադրային կարողությունների զարգացմանն ուղղված վերոհիշյալ միջոցառումներն իրականացնելու նպատակով առաջարկվում է դիտարկել նաև Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կենտրոնի ստեղծման հնարավորությունը:

Տեղեկատվական բնույթի ընդհանուր միջոցառումներ

12. Բնապահպանական պետական փորձաքննության (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) գործընթացն ապահովող «Տեղեկատվական ցանցի հիմնում»՝ ղեկավարվելով նաև 1210/90/ԵԽ դիրեկտիվի դրույթներով.
13. Բնապահպանական պետական փորձաքննության (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) գործընթացն ապահովող նորմատիվ իրավական ակտերի ու այդ գործընթացների վերաբերյալ տեղեկատվական նյութերի (բրոշյուրներ, բուկլետներ) հրատարակում.
14. Մեթոդաբանական ուղեցույցերի հրատարակում՝ միջազգային լավագույն փորձի տեղայնացմամբ.
15. Պիլոտային ծրագրեր՝ առանձին ոլորտներում ՇՄԱՌԳ մեթոդաբանությունը փորձարկելու նպատակով.
16. ՇՄԱՌԳ գործընթացներում նոր մեթոդիկաների մշակման, արդյունավետ հանրային մասնակցության և այլ լավ պրակտիկան խթանելու նպատակով՝ խրախուսման նախաձեռնությունների իրականացում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ 1
ՄԱՅԻՍ 2006

V. Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր (2006-2010 թթ.)

h/h	Միջոցառման անվանում	Նպատակ	Քայլեր	Շահագրգիռ կողմեր	Կատարման ժամկետ	Ֆինանս. աղբյուր.
1	2	3	4	5	6	7
Համակարգային կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ						
1.	«Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունում	Ռազմավարական գնահատման գործընթացի օրենսդրական կանոնակարգում	Ներկայացնել ՀՀ կառավարություն, այնուհետև՝ ՀՀ ազգային ժողով	ՀՀ բնապահպանության նախարարություն. ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողով	2006 թվականի ընթացքում	Չի պահանջվում
2.	«Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում և ընդունում					
	2.1. «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքով լիազոր պետական մարմին ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում	Օրենքով ամրագրված լիազոր պետական մարմնի իրավասությունները ՀՀ բնապահպանության նախարարությանը վերապահելը	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարություն	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում	Չի պահանջվում
	2.2. ««Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենք կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակման և ընդունման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշում	Օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերի մշակման ու ընդունող մարմնին ներկայացման ժամկետների ամրագրում՝ դրանց պարտադիր ու ժամկետներում կատարման երաշխիքների ստեղծում	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարություն	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում	Չի պահանջվում
	2.3. «ՇՄԱՌԳ մեթոդական ուղեցույցը հաստատելու	Օրենքով սահմանված պահանջներով ՇՄԱՌԳ	Օրենքի ընդունումից հետո իրավական	ՀՀ բնապահպանության նախարարություն,	Օրենքի ընդունումից	ՀՀ պետ. բյուջե,

	մասին» նորմատիվ գերատեսչական ակտ	իրականացման և դրա արդյունքում հաշվետվությունների կազմման համար մեթոդական ցուցումների տրամադրում հիմնադրույթային փաստաթուղթ մշակողներին	ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ և անհատ փորձագետներ, հասարակական կազմակերպություններ	հետո՝ մեկ տարվա ընթացքում	Միջազգ.. ֆինանսավորում
	2.4. Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացին (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) հասարակայնության ծանուցման ու քննարկումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	Լիազոր մարմնի, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնադրույթային փաստաթուղթ մշակողի կողմից, Օրենքով ամրագրված պահանջների համաձայն՝ հասարակայնության ծանուցման ու քննարկումների իրականացման մեխանիզմների սահմանում	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, հասարակական կազմակերպություններ, լայն շահագրգիռ հասարակայնություն	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում
	2.5. ՀՀ կառավարության կողմից սահմանվող՝ անդրսահմանային ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթի բնապահպանական պետական փորձաքննության իրականացման ընթացակարգի	Անդրսահմանային ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթի փորձաքննության իրականացման <u>յուրաքանչյուր դեպքի</u> համար ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմման նպատակով <u>ընդհանուր</u> բովանդակության սկզբունքների որոշում՝	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում

	մշակման համար օրինակելի ձևը հաստատելու մասին ՀՀ բնապահպանության նախարարի հրաման	միջազգային պայմանագրերով և Օրենքով ամրագրված պահանջներին համապատասխան				
3	ՀՀ գործող օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համապատասխան օրենքների նախագծերի մշակում					
	3.1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում	Օրենքով ամրագրված պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ վարչական պատասխանատվության ենթարկելու համար դիսպոզիցիաների ու սանկցիաների (հստակ և տարբերակված) ամրագրում	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՀՀ կառավարություն, ՀՀ ազգային ժողով	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսա վորում
	3.2. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում	Օրենքով նախատեսված պետական տուրքի չափսի ամրագրում	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՀՀ կառավարություն, ՀՀ ազգային ժողով	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսա վորում
	3.3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ	Օրհուսի ու Էսպոյի կոնվենցիաներով,	Օրենքի ընդունումից հետո իրավական	ՀՀ բնապահպանության նախարարություն,	Օրենքի ընդունումից	ՀՀ պետ. բյուջե,

	օրենքում	Արձանագրությամբ և օրենքներով ու ենթաօրենդրական ակտերով ամրագրված բնապահպանական տեղեկատվության մատչելիության ու իրազեկման պահանջների ապահովում	ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՀՀ կառավարություն, ՀՀ ազգային ժողով, հասարակական կազմակերպություններ	հետո՝ մեկ տարվա ընթացքում	Միջազգ. ֆինանսա վորում
4	Նոր օրենքի նախագծի մշակում և ընդունում՝					
	4.1. Բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման դեպքում կասեցման, դադարեցման և արգելման կարգի մասին» ՀՀ օրենք.	Օրենքով ամրագրված փորձաքննության ենթակա սակայն փորձաքննության չներկայացված կամ փորձաքննական դրական եզրակացություն չունեցող ռազմավարական փաստաթղթի կամ դրա շրջանակներում իրականացվող գործունեության կասեցման կամ դադարեցման մեխանիզմների ամրագրում	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՀՀ կառավարություն, ՀՀ ազգային ժողով, հասարակական կազմակերպություններ	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսա վորում
5.	Մինչև «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա, սակայն բնապահպանական	Օրենքի անցումային դրույթներով սահմանված գործընթացի ապահովում՝ կանխարգելելու կամ նվազեցնելու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը	Օրենքի ընդունումից հետո տեսչական ստուգումներ, ՇՄԱՌԳ տեխնիկական առաջադրանքի կազմում, ՇՄԱՌԳ իրականացում,	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող	Օրենքի ընդունումից հետո՝ 2-3 տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, միջազգ. ֆինանսա վորում, համայնք ային

	փորձաքննական եզրակացություն չունեցող ռազմավարական փաստաթղթերի փորձաքննության իրականացում		փորձաքննական եզրակացության տրամադրում	կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ		բյուջե, ձեռնարկողի միջոցներ
Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ						
6.	Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացը կանոնակարգող լիազոր մարմնի, ինչպես նաև ՇՄԱՌԳ իրականացնող կառույցների՝					
	6.1. անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի (ներառյալ՝ համակարգչային տեխնիկա, կապ, փոխադրամիջոցներ, գրականություն և այլն) զարգացման ծրագրի կազմում	Օրենքի կիրակման ապահովման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ստեղծում	Բնապահպանական փորձաքննություն մասնակից կառույցների կարիքների գնահատում, զարգացման ծրագրի կազմում և իրականացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ	Օրենքի ընդունման պահից՝ շարունակական	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում
	6.2. հասարակայնության հետ կապերի իրականացման կարողությունների զարգացում	Օրհուսի ու էսպոյի կոնվենցիաներով, Արձանագրությամբ և օրենքներով ու ենթաօրենդրական ակտերով ամրագրված բնապահպանական տեղեկատվության մատչելիության ու հասարակության մասնակցության պահանջների ապահովում	Բնապահպանական փորձաքննություն մասնակից կառույցների հասարակայնության հետ կապերի պատասխանատու պաշտոնյաների վերապատրաստում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, հասարակական կազմակերպություններ	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում
7	Բնապահպանական					

	պետական փորձաքննության գործընթացը կանոնակարգող լիազոր մարմնի՝					
	7.1. ներգերատեսչական համաձայնեցման լծակների կատարելագործում (կարգերի մշակում)	Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացի արդյունավետության ապահովում	Օրենքի ընդունումից հետո գերատեսչական իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	<< բնապահպանության նախարարություն << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն << արդարադատության նախարարություն	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	<< պետ. բյուջե,
	7.2. բնապահպանական պետական փորձաքննության օրենքով սահմանված պահանջների նկատմամբ բնապահպանական պետական վերահսկողության իրականացման մեթոդական ցուցումների մշակում	Օրենքով ամրագրված պահանջների կատարման նկատմամբ վերահսկման մանրամասների ամրագրմամբ՝ տեսչական համակարգին աջակցություն	Օրենքի ընդունումից հետո իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	<< բնապահպանության նախարարություն, << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն << արդարադատության նախարարություն	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	<< պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսա վորում
8	Բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնող կառույցի և շահագրգիռ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության լծակների կատարելագործում (կարգերի մշակում)	Բնապահպանական պետական փորձաքննության (ներառյալ ՇՄԱՌԳ) գործընթացի արդյունավետության ապահովում	Օրենքի ընդունումից հետո գերատեսչական իրավական ակտի մշակում, համաձայնեցման և հաստատման ներկայացում	<< բնապահպանության նախարարություն, << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն այլ նախարարություններ ու գերատեսչություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	<< պետ. բյուջե
Կադրային կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ						
9	Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացի (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) մասնակից կառույցների կադրերի	Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացի մասնակիցների ՇՄԱՌԳ իրականացման կարողությունների զարգացում	Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացի մասնակիցների	<< բնապահպանության նախարարություն, << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն << տարածքային կառավարման	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում	<< պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսա վորում

	վերապատրաստում՝ ըստ համապատասխան ոլորտների և թեմաների		շրջանակների որոշում և համապատասխան ուսուցման թեմաներով վերապատրաստում	նախարարություն, ՀՀ կրթության նախարարություն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ		
10	ՇՄԱՌԳ փորձագետների ու մասնագիտացված կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ փորձի փոխանակման սեմինարների ու խորհրդակցությունների կազմակերպում	ՇՄԱՌԳ մասնագետների որակավորման բարձրացում և փորձի փոխանակում	ՇՄԱՌԳ հիմնահարցերի և նոր տեխնոլոգիաների բացահայտում, այդ թեմաներով միջոցառումների կազմակերպում	ՀՀ բնապահպանության նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ	Օրենքի ընդունումից հետո՝ շարունակական	Միջազգ. ֆինանսավորում
11	Հայաստանի համապատասխան բուհերում ՇՄԱՌԳ թեմաների ուսուցում, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների կազմակերպում	ՇՄԱՌԳ մասնագետների պատրաստում և որակավորման բարձրացում	Ուսումնական ծրագրերի մշակում և հաստատման ներկայացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, բուհեր, հասարակական կազմակերպություններ		ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում
<u>Տեղեկատվական բնույթի ընդհանուր միջոցառումներ</u>						
12	Բնապահպանական պետական փորձաքննության (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) գործընթացն ապահովող «Տեղեկատվական ցանցի հիմնում»՝ ղեկավարվելով նաև 1210/90/ԵԽ դիրեկտիվի դրույթներով	ՇՄԱՌԳ գործընթացին առնչվող տվյալների համակարգի ստեղծում և տեղեկատվության տրամադրման արդյունավետության բարձրացում	Տվյալների հավաքագրում, տեղեկատվական բազայի և ինտերնետային կայքի ստեղծում և պարբերաբար թարմացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում և շարունակական	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում

				կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ		
13	Բնապահպանական պետական փորձաքննության (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) գործընթացն ապահովող նորմատիվ իրավական ակտերի ու այդ գործընթացների վերաբերյալ տեղեկատվական նյութերի (բրոշյուրներ, բուկլետներ) հրատարակում և իրազեկության բարձրացման այլ միջոցառումների իրականացում	Օրհուսի ու Էսպոյի կոնվենցիաներով, Արձանագրությամբ, օրենքներով ու ենթաօրենդրական ակտերով ամրագրված պահանջների ապահովում	Տեղեկատվության կարիքների գնահատում, նյութերի պատրաստում և հրատարակում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, այլ նախարարություններ ու գերատեսչություններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ, ՀՀ ազգային ժողով, ՀՀ կառավարություն, հասարակական կազմակերպություններ, լրատվամիջոցներ	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում և շարունակական	ՀՀ պետ. բյուջե, Միջազգ. ֆինանսավորում
14	Մեթոդաբանական ուղեցույցերի հրատարակում՝ միջազգային լավագույն փորձի տեղայնացմամբ	ՇՄԱՌԳ նորագույն մեթոդների կիրառում Հայաստանում	Միջազգային փորձի ուսումնասիրում, լավագույն և Հայաստանում կիրառելի մեթոդների բացահայտում, նյութերի թարգմանում, ամփոփում և հրապարակում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ճյուղային նախարարություններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ	Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում և շարունակական	Միջազգ. ֆինանսավորում

15	Պիլոտային ծրագրեր առանձին ոլորտներում ՇՄԱՌԳ մեթոդաբանությունը փորձարկելու նպատակով	Բնապահպանական փորձաքննության գործընթացի մասնակիցների (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) տեսական գիտելիքների զարգացում և գործնականում կիրառում, ինչպես նաև նոր մեթոդների փորձարկում Հայաստանի պայմաններում	Պիլոտային ծրագրերի համար նպատակահարմար ռազմավարական փաստաթղթերի բացահայտում, ֆինանսների հայթայթում և բնապահպանական փորձաքննության (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) իրակա-նացում	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՇՄԱՌԳ ենթակա փաստաթուղթ մշակող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ	Օրենքի ընդունումից հետո՝ շարունակական	Միջազգ. ֆինանսավորում
16	ՇՄԱՌԳ գործընթացներում նոր մեթոդիկաների մշակման, արդյունավետ հանրային մասնակցության և այլ լավ պրակտիկան խթանելու նպատակով խրախուսման նախաձեռնությունների իրականացում	ՇՄԱՌԳ գործընթացների խթանում և քաջալերում	Օրինակ՝ համապատասխան վկայականի /մրցանակի տրամադրում լավագույն հասարակական քննարկումների կամ հաշվետվության կազմման համար	ՀՀ բնապահպանության նախարարություն, ՇՄԱՌԳ իրականացնող կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ	Օրենքի ընդունումից հետո՝ շարունակական	Չի պահանջվում

VI. Կարճաժամկետ գերակայություններ

Սույն բաժնում ներկայացված են նախորդում թվարկված հիմնախնդիրներից երեք գերակայական միջոցառումներ, որոնք առաջարկվում է իրականացնել մինչև 2008թ.: Օրենսդրական բարեփոխումներին առնչվող առաջին և երկրորդ միջոցառումները համակարգային կարողությունների զարգացմանն ուղղված առաջային լուծում պահանջող խնդիրներ են, որոնց իրականացման դեպքում միայն հնարավոր կլինի լիարժեք կիրառել «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները: Երրորդ միջոցառումն անդրադառնում է կադրային կարողությունների զարգացմանը և հանրային իրազեկության բարձրացմանը, որոնք անհրաժեշտ են ՇՄԱՌԳ բարձր որակ ապահովելու համար:

Միջոցառում 1 (2.3) ՇՄԱՌԳ մեթոդական ուղեցույցի մշակում
Նպատակ Օրենքով և ՌԷԳ արձանագրությամբ սահմանված պահանջներով ՇՄԱՌԳ իրականացման և դրա արդյունքում հաշվետվությունների կազմման համար մեթոդական ցուցումների տրամադրում հիմնադրույթային (ռազմավարական բնույթի) փաստաթուղթ մշակողներին
Իրականացնող կազմակերպություն ՀՀ բնապահպանության նախարարություն
ժամկետ Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում
Բյուջե 100,000 ԱՄՆ դոլար
Ֆինանսավորող կազմակերպություն ՀՀ պետական բյուջե և միջազգային ֆինանսավորում
Գործողություններ Միջազգային խորհրդատվություն, Հայաստանում կիրառելի միջազգային լավ փորձի/մեթոդաբանության բացահայտում, համապատասխան նյութերի թարգմանում հայերեն լեզվով, ՇՄԱՌԳ մեթոդաբանության մշակում՝ հաշվի առնելով միջազգային և Հայաստանում իրականացված պիլոտային ծրագրերի արդյունքում ձևավորված փորձը, «ՇՄԱՌԳ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» իրավական ակտի նախագծի մշակում և ընդունում՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները, շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկումների կազմակերպում, ուղեցույցի հրատարակում, կադրերի վերապատրաստում/ուսուցում ՌԷԳ արձանագրության և ՇՄԱՌԳ մեթոդների վերաբերյալ:

Շահառուներ Հիմնադրույթային փաստաթուղթ մշակող/պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ
Կապը առնչվող այլ ծրագրերի հետ ՄԱԶԾ/ՏԲԿ փորձնական ծրագիր՝ Երևանի գլխավոր հատակագծի ՇՄԱՌԳ

Միջոցառում 2 (2.4, 2.5, 3, 4) «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ընթացակարգերի փաթեթի մշակում
Նպատակ «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկման ապահովում
Իրականացնող կազմակերպություն ՀՀ բնապահպանության նախարարություն
Ժամկետ Օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում
Բյուջե 50,000 ԱՄՆ դոլար
Ֆինանսավորող կազմակերպություն ՀՀ պետական բյուջե, միջազգային ֆինանսավորում
Գործողություններ «Բնապահպանական պետական փորձաքննության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ընթացակարգերի նախագծերի մշակում, այդ թվում՝ ա/ Բնապահպանական պետական փորձաքննության գործընթացում (ներառյալ՝ ՇՄԱՌԳ) հասարակայնության ծանուցման ու քննարկումների իրականացման ընթացակարգ, որը կընդունվի ՀՀ կառավարության որոշմամբ, բ/ Անդրսահմանային ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթի բնապահպանական պետական փորձաքննության իրականացման ընթացակարգի օրինակելի <u>ձև,</u> որը կընդունվի ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով և կծառայի որպես ուղեցույց անդրսահմանային ՈՒԳ ենթակա դեպքերում ՀՀ կառավարության որոշումների և բազմակողմ համաձայնագրերի նախապատրաստման համար, գ/ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների մշակում և դրանց ընդունում համապատասխան ՀՀ օրենքներով, դ/ «Բնապահպանական օրենսդրության պահանջների խախտման դեպքում կասեցման,

դադարեցման և արգելման կարգի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ընդունում՝ ՀՀ Ազգային Ժողովի կողմից: Վերոհիշյալ քայլերին զուգահեռ կիրականացվեն նշված իրավական ակտերի նախագծերի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկումների կազմակերպում, իրավական ակտերի հրատարակում, կադրերի վերապատրաստում/ ուսուցում՝ ՌԷԳ արձանագրության և տվյալ իրավական ակտերի վերաբերյալ:
Շահառուներ Հիմնադրույթային փաստաթուղթ մշակող/պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ
Կապը առնչվող այլ ծրագրերի հետ - Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Բնապահպանության տեսչության համակարգի հզորությունների զարգացման ծրագիր» - Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքի ու դրա անդամ պետությունների միջև կնքված համաձայնագիր

Միջոցառում 3 (9, 14, 15) Տարբեր ոլորտներում 4-5 պիլոտային ծրագրերի իրականացում և կադրերի ուսուցում փաստացի օրինակների վրա
Նպատակ Բնապահպանական փորձաքննության գործընթացի մասնակիցների (ներառյալ՝ ՇՄԱՈԳ) տեսական գիտելիքների զարգացում և գործնականում կիրառում, ինչպես նաև նոր մեթոդների փորձարկում Հայաստանի պայմաններում
Իրականացնող կազմակերպություն ՀՀ բնապահպանության նախարարություն Համապատասխան ռազմավարական փաստաթղթի հեղինակ պետական կառավարման մարմին
Ժամկետ 2006-2008
Բյուջե 100,000 ԱՄՆ դոլար
Ֆինանսավորող կազմակերպություն ՀՀ պետական բյուջե, միջազգային ֆինանսավորում
Գործողություններ Գործերի ընտրություն (առաջնային ոլորտները կընտրվեն՝ հիմք ընդունելով օրենսդրական պահանջներն ու հիմնադրույթային փաստաթուղթ մշակելու մտադրությունները՝ ամենայն հավանականությամբ ընդգրկելով քաղաքաշինության,

էներգետիկայի, հանքարդյունաբերության, անտառների և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտները), միջազգային խորհրդատվություն, միջազգային համապատասխան փորձի բացահայտում, մասնագետների վերապատրաստում ՌԷԳ արձանագրության և ՇՄԱՌԳ մեթոդաբանության վերաբերյալ, ՇՄԱՌԳ շրջանակների որոշում և իրականացում, շահագրգիռ կողմերի ներգրավմամբ քննարկումների կազմակերպում, կարծիքների ամփոփում և ներկայացում համապատասխան կառույցներին, ՇՄԱՌԳ գործընթացի լուսաբանում լրատվամիջոցներով, պիլոտային ծրագրերի միջոցով տարբեր մեթոդների փորձարկման արդյունքում ՇՄԱՌԳ մեթոդաբանության կատարելագործում և, անհրաժեշտության դեպքում, «ՇՄԱՌԳ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» իրավական ակտի մեջ փոփոխությունների առաջադրում:
Շահառուներ Հիմնադրույթային փաստաթուղթ մշակող/պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններ ՇՄԱՌԳ-ի ենթակա փաստաթղթեր մշակող և (կամ) փաստաթղթերի ՇՄԱՌԳ իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք
Կապը առնչվող այլ ծրագրերի հետ ՄԱԶԾ/ՏԲԿ փորձնական ծրագիր՝ Երևանի գլխավոր հատակագծի ՇՄԱՌԳ

VII. Ռազմավարության կիրարկման հիմքերը

Սույն՝ «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական խորհրդի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրության կիրարկման ազգային ռազմավարություն» փաստաթղթի սկզբունքները և բովանդակությունը ի սկզբանե բնապահպանական պետական փորձաքննության, դրա շրջանակներում՝ նաև ՇՄԱՌԳ քաղաքականության ու ռազմավարության գործընթացն ապահովող ռազմավարական կամ հայեցակարգային փաստաթուղթ է և ՀՀ օրենսդրության համաձայն, նման հայեցակարգային փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ և դառնում կատարման ենթակա իրավական ակտ:

Սույն փաստաթուղթը ևս համապատասխան համաձայնություններ անցնելուց և լրամշակվելուց հետո, որպես բնապահպանական փորձաքննության (ներառյալ՝ ՇՄԱՌԳ-ի) ոլորտի զարգացման պետական ռազմավարական փաստաթուղթ կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումից հետո, համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության ընթացակարգի, ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով կհաստատվի վերոգրյալ ռազմավարական փաստաթղթում

ներառված միջոցառումների իրականացման ծրագիր, որում կամրագրվի յուրաքանչյուր միջոցառումը, կատարող պատասխանատու կառույցն ու պաշտոնատար անձը և կատարման ժամկետները՝ ռազմավարական փաստաթղթում ամրագրված ժամկետների համադրմամբ:

Ռազմավարության իրականացման համար կնախատեսվեն ինչպես պետական բյուջեից հատկացումներ, այնպես էլ ֆոնդերի հայթայթում միջազգային դոնոր կազմակերպություններից:

Արձանագրության կիրարկման սույն ազգային ռազմավարության պատասխանատու համակարգող կառույց կհանդիսանա ՀՀ բնապահպանության նախարարությունը:

ՀՀ կառավարության կողմից հաստատվող ազգային ռազմավարության փաստաթղթում նշված միջոցառումները կարող են իրականացվել նաև տարբեր շահագրգիռ կառույցների, այդ թվում՝ հասարակական ու մասնավոր կազմակերպությունների նախաձեռնությամբ, բացառապես՝ ՀՀ բնապահպանության նախարարության հետ դրա նպատակահարմարության և բովանդակության նախապես համաձայնեցման դեպքում: